ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 18

ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԺՈՐԱ ՆՎԵՐԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ/ծնվ. 13.05.2007թ./ ԵՎ ՕՎՍԱՆՆԱ ՆՎԵՐԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ /ծնվ.20.10.2009թ./ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Ընտանեկան օրենսգրքի 109-րդ, 134-րդ, 135-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության 02-ը հունիսի 2016թ N631-Ն որոշմամբ ընդունված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետի 1-ին մասի բ/ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով 2020 թվականի ապրիլի 15-ի Մալիշկա համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մալիշկա համայնքի բնակիչներ Ժորա Նվերի Այվազյանին/ծնվ. 13.05.2007թ/ և Օվսաննա Նվերի Այվազյանին/ծնվ. 20.10.2009թ/ ճանաչել որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, նրանց նկատմամբ սահմանել խնամակալություն:

2. Խնամակալ նշանակել հոր կողմից պապին Ժորա Աղաբեկի Այվազյանին /ծնված 04.02.1949թ./ իր համաձայնությամբ (հիմք՝ Ժ. Այվազյանի Մալիշկա համայնքի ղեկավարին ուղղված 03/03/2020թ. դիմումը):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ

2020 թ. ապրիլի 17
գ.Մալիշկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Մալիշկա համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Մալիշկա, (0281) 95406 (0281) 2-20-84, malishka.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 19

ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մալիշկա համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման,արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման,արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով,ղեկավարվելով<<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով,<<Տեղական ինքնակառավարման մասին: Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մաս 7-րդ կետերով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:

2.Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարմս պլանի հավելված N6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

3.Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱՐԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ**

2020 թ. 04 20
գ.Մալիշկա